



FUNDAÇÃO  
CALOUSTE  
GULBENKIAN

Հրատարակուել է.  
Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան  
հովանաւորութեամբ

# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Թի 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԻՐ. ՏԱՐԻ 2014

ՄԱՇՏՈՑ ԵՂԻՎԱՐՂԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ. ՊԱՏՄՈՒԹԻԻՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻԻՆ ԵՒ Թ ԴԱՐԻ ԲՆԱԳՐԻ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁ

Ալեքսան Յակոբեան

Մաշտոց Եղիվարդեցին Հայոց կաթողիկոս դարձաւ 897 թ. Յունիսին, մօտ վաթսուէն տարեկան հասակում, եւ պաշտօնավարեց ընդամենը 7 ամիս, մինչեւ 898 թ. սկզբները, հայ ժողովրդի համար պատմական մի ծանր ժամանակաշրջանում (897-898 թթ.)<sup>1</sup>: Նա եղաւ նշանաւոր հեղինակը, ըստ ամենայնի՝ Հէնց այդ ամիսներին վերջնականապէս աւարտուած՝ այսպէս կոչուած «Մաշտոց ծիսարան»-ի, որն արդէն հազար հարիւրից աւելի տարիներ օգտագործում են Հայ առաքելական եկեղեցու սպասաւորները<sup>2</sup>:

Ըստ իր աշակերտ Ստեփաննոս կրօնաւորի կողմից դեռ 893 թ. շարադրուած

մի իւրօրինակ Վարքի («Ստեփաննոսի՝ Վերնագիր ինքնագրութեան վասն վարուց երանելոյն Մաշդոցի»)՝<sup>3</sup> եւ նրա հաղորդածը որոշ չափով լրացնող Ստեփաննոս Օրբէլեանի տեղեկութիւնների՝ Մաշտոցը ծնուել է 833 թ., Սիւնիքի Սոթք գաւառում՝ այնտեղ «պանդխտութեամբ» ապաստանած Եղիվարդեցի (Արագածոտնի) Գրիգոր երէցի ընտանիքում: Հայրը նրան ուսանելու է տուել նշանաւոր Մաքենոցաց վանքում: Այստեղ Թէոդորոս կրօնաւորի եւ Ստեփաննոս վարդապետի մօտ ուսումնառութիւնն աւարտելուց յետոյ Մաշտոցը քահանայ է ձեռնադրուել Սիւնեաց Դաւիթ եպիսկոպոսի կողմից եւ տեղափոխուել Արտաւազի անապատը (Ապարանքում), սակայն շուտով հաստատուել է Սեւանայ (Գեղամայ) կղզու վանական միաբանութիւնում: Հէնց որպէս Սեւանի վանահայր, իր սրբակրօն վարքի եւ եկեղեցաշինական

1 Մ. արքեպ. Օրմանեան, Ազգայատում, Բու. Ա., Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2001, ս. 1181-1186:

2 Վերջին հրատարակութիւնները տե՛ս Մատենագիրք Հայոց, Բու. Թ., Թ դար, Անթիլիաս, 2008, էջ 574-693 (աշխատասիրող՝ Յակոբ Քեոսէեան). Մայր Մաշտոց, Բու. Ա., գիրք Ա, Ըստ հնագոյն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատենանի, բնագրական եւ կանոնացանկային յաւելումով, աշխատասիրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2012 (բնագիրը՝ էջ 85-487):

3 Վերջին հրատարակութիւնները տե՛ս Մատենագիրք Հայոց, Բու. Թ., էջ 695-701 (աշխատասիրող՝ Յակոբ Քեոսէեան). Մայր Մաշտոց, Բու. Ա., գիրք Ա, ... աշխատասիրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, էջ 709-737:



տոհմէն էր, որ ունէր զսեպհական տէրութիւնն Աղուանից [տարբ. Աղվանից]»<sup>13</sup>:

Թէպէտ նկարագրուած հաշուեյարդարն իրականացնողը՝ Սիւնի իշխան լինելն արձանագրուած է միայն Օրբէլեանի մօտ, բայց բովանդակային պարզ քննութիւնից երեւում է, որ այդ մանրամասնը, ամենայն հաւանականութեամբ, չի յօրինուել նրա կողմից, քանի որ դժուար է դրա համար որեւէ պատճառ նշմարել: Թերեւս, այդ մանրամասնը պարզապէս եղել է ենթադրելի սկզբնաղբիւրում, իսկ Մովսէս Դասխուրանցին այն բաց է թողել զուտ անկարեւորութեան եւ աւելորդ մանրամասն ներառելուց խուսափելու մտքով. նոյն մտքով Սիւնեաց պատմիչն էլ բաց է թողել հակամարտող իշխաններին՝ ինչ-որ կերպ ազգակից լինելու մասին մանրամասնը: Ահա այս բնագրերի համադրութեան շնորհիւ ի յայտ եկող մեծ նմանութիւնը թոյլ է տալիս մեզ ենթադրել Օրբէլեանի եւ Դասխուրանցու կողմից միեւնոյն աղբիւրը, այն է՝ Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսի՝ մեզ չհասած Պատմութիւն երկն օգտագործած լինելու հաւանականութիւնը, որին քիչ անց յղում է Սիւնեաց պատմիչը:

Մանրամասններ, որ իր ամբողջ ԼԲ գլխում Ստեփաննոս Օրբէլեանը ներկայացնում է Թ. Առաջին կէսի Սիւնիքին վերաբերող վկայութիւններ, որոնք շատ դէպքերում նոյնքան բառացի համընկնում են Մովսէս Դասխուրանցու երկի Գ գրքում յստակ ժամանակագրութիւն ունեցող հաղորդումների հետ: Ի դէպ, ժամանակին նկատելով ՊԱ-ում Սիւնիքին վերաբերող վկայութիւնների անսպասելի առատութիւնը՝ մենք փորձել ենք ինչ-որ մեկնաբանութիւններ տալ դրան<sup>14</sup>: Սակայն այժմ հնարաւոր է բաւարար համարել դրանցից միայն մէկը. Դասխուրանցին Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկում առատ

13 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԲ, էջ 115: Պատմութիւն անհանգիստ Սիսական, էջ 158-159:  
14 Տե՛ս Ա. Ա. Ակոբյան, *Ալբանիա-Ալյանկ*, էջ 203, 210:

նիւթ գտնելով իր խնդրոյ առարկայ «Աղուանից երկրի»<sup>15</sup> վերաբերեալ՝ մեծ ծաւալով քաղել է դրանք եւ դրանց արանքում պարզապէս ընդօրինակել նաեւ զուտ Սիւնիքին վերաբերող որոշ նիւթեր:

Արդ՝ ինչո՞ւ Մաշտոց կաթողիկոսի՝ նշուած ժամանակագրական հաղորդումները աղբիւրը լինելու իրողութիւնը նախկինում չէր նկատուել: Թւում է, թէ՛ պարզապէս այն պատճառով, որ այդ մասին ուղիղ վկայութիւնն Օրբէլեանի շարադրանքի բովում յայտնուել է յաջորդ գլխի (գլխագիրը՝ «Վասն գալոյ Մովսէսայ տաճիկ զօրավարին ի Սիւնիս. եւ փեսայանալոյ Բաբանայ պարսկի Սիւնեաց տեառն Վասակայ. եւ այրելոյ զՄաքենոցն, եւ կոտորելոյ զԳեղարքունի եւ զԲաղասական») միջնամասում, այն էլ՝ Թանահատի վանքի մասին արուած մի պատմութիւնից յետոյ: Վերջինն առնուած չէ Մովսէս Դասխուրանցու կողմից, բայց բնագրագիտական ուշադիր ընթերցումից երեւում է, որ ոչինչ չի խանգարում՝ դրա գոնէ մեծ մասը եւս համարելու Մաշտոց Եղիվարդեցու կորսուած պատմական երկին յանգող: Թա-

15 Վերջինս 428 թ. ի վեր ընդգրկում էր թե՛ Կուր գետից մինչեւ Կովկասեան լեռներ եւ Գերբեզի իջնող «Բուն աշխարհն Աղուանից» երկիրը (անտիկ Ալքանդա, թե՛ այդ թուին Վոսմ Ե Պարսից արքայի կողմից վերացուած Մեծ Հայքի թագաւորութեան հիսիս-արեւելեան Ոսիք եւ Արցախ անհանգները (վերջինը՝ 451 թ.). ըստ ամենայնի՝ Վոսմի նոյն հրամանագիրը դրանք ընդգրկել էր նորաստեղծ վարչամիտոսի՝ մարզպանութեան կազմում, որն ստացել էր իր գլխաւոր հատուածի «Աղուանք» անունը (միջին պարսկ.՝ «Աուան» կամ «Ռան»). տե՛ս Բ. Ուրտաբեան, *Հիսիս-արեւելեան Հայաստանի անխամարզպանական շրջանի վարչա-քաղաքական փոփոխ հարցի շուրջը*, Բեժ, 1975, հոմ 2, էջ 149-164; Բ. Յարութիւնեան, *Մեծ Հայքի թագաւորութեան հիսիս-արեւելեան մարզերի վարչա-քաղաքական կազմութիւնը 387-451 թթ.*, Բեժ, 1976, հոմ 2, էջ 77-95; նոյնի՝ *Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елиши*, – «Кавказ и Византия», вып. 1, Ер., 1979, էջ 19-35; А. А. Аюбян, *Албания-Алуанк*, էջ 109-114; И. Г. Семенов, *Этнополитическая история Восточного Кавказа в III-VI вв.*, Автореф. дисс. ... канд. ист. наук, Махачкала, 2002, էջ 14:

նահատին նուիրուած այդ պատմութիւնից յետոյ Սիւնեաց պատմիչը բառացի գրում է. «Եւ զայս ծանոյց մեզ Պատմութիւնն երանելոյն Մաշտոցի, որ ի Սեւան»: Իսկ դրան անմիջապէս յաջորդում է մի նոր յղում. «Բայց գտաք յիրոց արձանագրութեանցն, եթէ 400 ամաւը յառաջ քան զՀայ թուականն շինեցաւ եկեղեցին յիշխանացն Սիւնեաց՝ յանուն սրբոյ նախավկային Ստեփաննոսի»<sup>16</sup>: Այս երկրորդ նախադասութիւնը եւս շատ կարեւոր է նրանով, որ ցոյց է տալիս տուեալ գլխի շարադրման համար Օրբէլեանի ձեռքի տակ նաեւ այլ նիւթերի եղած լինելը (անշուշտ, դրանց է յանգում գլխի երկրորդ կէսի առասպելապատումը՝ արջերի ու գայլերի հետ Մխիթար վանահօր «բարեկամութեան» մասին): Այլ է եղել նաեւ Սիւնեաց պատմիչի համար Պատմութիւնն երանելոյն Մաշտոցի երկի նշանակութիւնն՝ իբրեւ սկզբնաղբիւր: Եթէ Մովսէս Դասխուրանցին նրա մեծ կտորները գրել է իր երեք գրքահատուածներից վերջինի՝ մեր ճշտումների համաձայն՝ ամբողջ երկրորդ կէսի հիմքում (բացառեալ վերջին երկու գլուխները եւ դրանց նախորդող երկու պարբերութիւն իԱ գլխում), ապա Սիւնեաց պատմիչը բաւարարուել է լոկ իր մէկուկէս ոչ մեծ գլուխների համար (ԼԲ եւ ԼԳ) տեղեկութիւններ քաղելով: Ծիշտ է, իր սկզբնաղբիւրը, բարեբախտաբար, յանուանէ յիշատակել է հէնց Օրբէլեանը:

Այսպիսով, հնարաւոր է դառնում ճշտել Պատմութիւնն երանելոյն Մաշտոցի կոչուած երկի բովանդակութեան սահմանները:

16 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԳ, էջ 117: Պատմութիւն անհանգիստ Սիսական, գլ. ԼԳ, էջ 160: Այս տեղեկութեան շնորհիւ Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկի գոյութիւնը ենթադրել են բոլոր հայ մատենագրագետները: Ըմբ. Գ. Հ. Ջարբեանյան, *Հայկական հին դարերէն պատմութիւն*, Գ տպագրութիւն, Վենետիկ - Ս. Ղազար, 1897, էջ 510; Ե. եպ. Պողարեան, *Հայ գրողներ, Ե-ԺԵ դար*, Երուսաղէմ, 1971, էջ 133; Հ. Կ. Քիպարեան, *Պատմութիւն հայ հին գրականութեան*, Վենետիկ - Ս. Ղազար, 1992, էջ 326:

ըն՝ ըստ ՊԱ-ի, եւ միաժամանակ՝ նրա նշանակութիւնը Մովսէս Դասխուրանցու համար՝ իբրեւ մի կարեւորագոյն աղբիւր<sup>17</sup>: Մեր վերականգնման տարբերակով՝ ՊԱ-ում Մաշտոց Եղիվարդեցուց քաղուած բնագիրն սկսում է գլ. Գ.ԺԵ-ի շարադրանքով, որը վերաբերում է է. դ. կէսերի իրողութիւններին եւ տալիս է Հայոց թուականով երկու թուագրում: Իհարկէ, որեւէ հիմք չկայ՝ վստահ լինելու, որ Եղիվարդեցու բուն երկը եւս սկսուել է հէնց այդպէս՝ առանց ենթադրելի նախադրութեան եւ անմիջապէս ժամանակագրական համառօտ թուարկումներով («Բարեյաղթ Հերակղ Հոովմայեցուց թագաւոր զպէսպէս պատերազմունս վանեալ՝ յիշատակ քաջութեան եթող...» եւն): Սակայն Դասխուրանցու բնագրի ուշադիր ընթերցումը թոյլ է տալիս առաւել մեծ հաւանականութեամբ ենթադրել, որ նրա նախորդող գլուխներում չկան Մաշտոցի երկի աւելի վաղ կտորներից քաղուած հատուածներ: Իրօք, ժԵ գլխի բովանդակութիւնը կտրուած է ՊԱ-ի է դարի իրողութիւններին վերաբերող մեծ հատուածներից (Բ գրքում), եւ դա կարելի է բացատրել լոկ նրանով, որ այն ուղղակի կազմել է հետագայ գլուխներում արտագրուած ընդհանուր աղբիւրի սկզբնամասը (Գ.ԺԳ գլխում ժամանակագրական համառօտ թուարկումները շարունակուած են սահուն ձեւով), որը Դասխուրանցին չի կտրել մնացեալից եւ, բարեբախտաբար,

17 Տեղին մէկ անգամ եւս յիշենք հայագետների համոզումը, որ ՊԱ-ում առկայ միջերկրի ճշգրիտ վերահանումն է լոկ թոյլ տալիս ոչ միայն գործ ունենալ վաղ աղբիւրներից բառացի քաղուած կտորների հետ, այլեւ ընկալել իր՝ Մովսէս Դասխուրանցու յաւելումները կամ սեփական շարադրանքը: Նոր աղբիւրների բացայայտումով ու ՊԱ-ի պահպանուած բնագրի հետ համեմատութեամբ են մասնագետները կարողանում ճշմարիտ պատկերացում կազմել ժ. դ. վերջերին ստեղծագործած այդ շարադրանքի հեղինակի՝ հայ մատենագրութեան ուշագրաւ եւ բարդ մի ներկայացուցչի իմացութիւնների, աշխարհայեացքի, նպատակադրումների ու արած ինքնորոյն աշխատանքի մասին (հմմ. Ա. Յակոբեան, *Սիսա Արճիշեցի կաթողիկոսի թղթերը*, – «Հանդէս ամսօրեայ», ՄԻՋ տարի, Վիեննա-Երեւան, 2012, սն. 1):

«Հեշտացրել է» նորորեայ հետազոտողի գործը: Թւում է, թէ պատմիչն այդ աղբիւրից կտրել եւ մի քանի գլուխ առաջ է տարել միայն Աղուանից կաթողիկոս Միքայէլ Շաքեցու (705-742) կողմից կանոնադանց իշխաններին նզովելու սիւժէն (գլ. Գ.ժգ), որի շարունակութիւնը գտնուում է Գ.ժթ գլխում՝ Հայոց Եսայի (Եղիպատրուշեցի՝ 775-788) եւ Աղուանից Սողոմոն (781 թ.<sup>18</sup>) կաթողիկոսների կողմից՝ նզովուած «Վարդանուրհի տիկնոջը» Պարտաւում ներում չնորհելը: Կտրուած կտորը Դասխուրանցի տեղադրել է Միքայէլի առաջին յիշատակութիւնից յետոյ (Գ.ժք գլխի վերջում), որը, թերեւս, յանգում է պատմիչի՝ «Աղուանից կաթողիկոսացանկ» պայմանական անունով յայտնի ուրոյն գրաւոր աղբիւրին, ապա ընդօրինակել է նաեւ այդ կաթողիկոսի՝ երկաթնակների դէմ ուղղուած ոչ մեծ երկը (գլ. Գ.ժդ):

Իսկ Եղիվարդեցու երկից քաղուած ժամանակագրական կտորների արանքում (գլ. Գ.ժե-իա) Մովսէս Դասխուրանցին տեղադրել է միայն երկու գլուխ. Գ.ժէ-ն պատմում է Ը. դարի նշանաւոր մատենագիր Ստեփաննոս Սիւնեաց արքեպիսկոպոսի կեանքի մասին, իսկ նրա յաջորդը նոյն Ստեփաննոսի մի ոչ մեծ երկն է՝ Իլիոն («Ղիոն») քաղաքի ակերման եւ Հռոմի կռուցման մասին: Դրանցից առաջինն, անշուշտ, յանգում է Ստեփաննոսի վարքի վաղ տարբերակին, որն առանձին չի պահպանուել, բայց այն հետագայում օգտագործել են նաեւ Մխիթար Այրիվանեցին («Ստորագրութիւն պատմութեան բազմերջանիկ սուրբ եւ փառաւորեալ Հայրապետին Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի՝ յօրինեալ ի տէր Մխիթար վարդապետէ, յեպիսկոպոսէ սուրբ ուխտին Այրավանաց»)

18 Ըստ ՊԱ, Գ.իգ գլխի («Անուանք հայրապետացն Աղուանից, ամբ եւ գործք նոցին»։ Արա հիմքում, ըստ ամենայնի՝ ընկած է Դասխուրանցու մի ուրոյն աղբիւր՝ «Աղուանից կաթողիկոսացանկ»-ը, հմմ. Ա. Ա. АКОПЯН, *Албания-Алуанк*, էջ 210-211)՝ Սողոմոնն աթոռակալել է կէս տարի: Ըստ ճշգրտուած հաշուարկի՝ դա ընկնում էր 781 թ. ընթացքում (տե՛ս նոյն տեղում, էջ 277):

եւ Ստեփաննոս Օրբէլեանը (գլ. Լ. «Վասն Տեառն Ստեփաննոսի Սիւնեցույ վարք եւ վախճան. եւ որ ինչ պատմի զնմանէ»)՝<sup>19</sup> նշենք, նաեւ որ Կիրակոս Գանձակեցին օգտագործել է միայն ՊԱ-ի բնագիրը: Այդ տեղի համար Դասխուրանցին, միգուցէ, ուղեցոյց է ընդունել իր նախորդող գլխի (Գ.ժգ) վերջին նախադասութեան թուագրումը՝ «ի ճՁ թուականին» (731-732 թ.), այնքանով որքանով Ստեփաննոսի եղբրական մահը Վայոց ձոր գաւառի («Աշխարհացոյց»-ում եւ ՊԱ-ում՝ Վայոյ ձոր)<sup>20</sup> Մոզ աւանում վերագրուում է Հայոց թուականութեան ճՁԴ տարուայ Հրոտից ամսի 15-ին (736 թ. Մայիսի 5):

Մեծ հաւանականութեամբ կարելի է մտածել, որ Մաշտոց Եղիվարդեցին իր երկը հասցրել է ընդհուպ մինչեւ իր կաթողիկոսանալու տարին՝ Հայոց ՅնՁ (897 թ. Ապրիլ – 898 թ. Ապրիլ), որի տակ ՊԱ-ի Գ.իա գլխում պահպանուել է մի քանի իրադարձութիւնների յիշատակութիւն. աւարտն է՝ «Յայնժամ վերափոխի մեծ Հայրապետն Հայոց Գիորգ [Գառնեցին] եւ իշխանն Սիւնեաց Աշոտ: Ջոր ողբերգական կանայքն կականէին՝ ասելով. «Մի՛ եկեսցէ եւ մի՛ լիցի այսպիսի տարի ի վերայ երկրի, որչափ աղգ մարդկան է»: Եւ Հայ թիւն ՅնՁ էր»: Յատկանշական է, որ եթէ այդ վերջին հատուածներում ՊԱ-ում թուարկուում են գրեթէ ամեն տարուայ իրադարձութիւններ, ապա նշուած աւարտից յետոյ

19 Տե՛ս Գ. արքեպս. Յովսէփեանց, *Մխիթար Այրիվանեցի. Աորագիտ արձանագրութիւն եւ երկեր*, Երուսաղէմ, 1931, էջ 17-23; Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. Լ, էջ 95-105; Պատմութիւն Անհանգիմ Սիսական, գլ. ԼԱ, էջ 131-144; Մ. վրդ. Գրիգորեան, *Ստեփանոս Սիւնեցի. իր երկու Աորայայտ մեկնութիւններու հրատարակութեան առիթով*, Պէյրութ, 1958; Ա. Ա. АКОПЯН, *Албания-Алуанк*, էջ 210; Յ. Քէնուէեան, *Ստեփանոս Սիւնեցի եւ Արա մատենագրական ժառանգութիւնը*, «Մատենագիրք Հայոց», հտ. 2, Ը դար, էջ 93-104:

20 «Աշխարհացոյց» Է դարի Անանուհի, Գիտա-քննական բնագիր՝ Ա. Յակոբեանի, «Համդէս ամսօրեայ», Ծիւղ տարի, Վիեննա – Երեւան, 2013, ս. 137, 147:

Դասխուրանցու յիշատակած յաջորդ թիւը Հայոց ՅԿԳ-ն է (=914 թ.)՝ Սմբատ Ա արքայի նահատակութեան տարին<sup>21</sup>: Դրանից յետոյ 982-988 թթ. միջակայքում (!) ստեղծագործած պատմիչը ԻԱ գլխի վերջում մի-մի պարբերութեամբ նշում է լոկ նաեւ դելմիկ Սալարեանների իշխանութեան հաստատումը (մօտ 940 թ.) եւ Ռուզիկների կողմից Պարտաւի վեցամսեայ ռազմակալումը (944-945 թթ.)՝ այդպիսով փաստորէն սպառելով իր պատմական տեղեկատուութիւնը: Ճիշտ է՝ յաջորդ գլխի վերջում նա ամենայն չքեղութեամբ նկարագրում է նաեւ իր՝ այսպէս ասած, «գլխաւոր հերոս» Յովհաննէս Սենեքերիմի՝ Փառխոսի առաջին թագաւորի, դահակալումը (որը տեղի է ունեցել մօտ 960-970-ական թթ.), սակայն անգամ դա՛ առանց թուագրութեան: Պարզ է, որ նրա ձեռքի տակ այլեւս չկար, մեր կարծիքով՝ խնդրոյ առարկայ Մաշտոցի երկի պէս մի անգնահատելի աղբիւր:

Յաւելենք, որ Մովսէս Դասխուրանցին օգտագործել է իր այս աղբիւրն, ըստ ամենայնի՝ նոյն ձեւով, ինչ որ մնացեալի մեծ մասը, այսինքն՝ գրեթէ բառացի արտագրելով<sup>22</sup>: Նրա ամենամեծ միջամտութիւնները սեփական գլխաբաժանում մտցնելը եւ գլխագրերի յաւելումներն են, ինչպէս որ նա անում է նաեւ մեծ ծաւալ ունեցող այլ աղբիւրների նիւթն ընդօրինակելիս: Միայն մէկ դէպքում մենք հիմք ենք տեսնում ենթադրելու, որ Դասխուրանցու գլխագիրը, այն է՝ «Որ ինչ յերկերիւր թուականութեանն Հայոց ցայսր գործք՝ լեալ ի սահմանս Արեւելից» (Գ.ժթ), հաւանաբար, համապատասխանում է աղբիւրի վերնագրային բնոյթի մի արտայայտութեանը: Բանն այն է, որ յաջորդող բնագրում չի յիշատակուում «յերկերիւր թուականութեանն Հայոց»-ը (որը, հէնց, ճիշտն է), եւ աւելի հաւանական է մտածել, որ այն ոչ թէ հաշուարկուել է՝ սովորաբար

21 ՊԱ, գլ. Գ.իա, էջ 337:  
22 Մանրամասն տե՛ս Ա. Ա. АКОПЯН, *Албания-Алуанк*, էջ 177-211:

նման բաներ չանող ժ. դարի պատմիչի կողմից, այլ ուղղակի գրուած է եղել նրա աղբիւրում:

Մի քանի դէպքում հնարաւոր է նկատել նաեւ Մովսէս Դասխուրանցու, իրօք, խմբագրական բնոյթի միջամտութիւններ իր աղբիւրի բնագրին: Օր.՝ այդպիսին է թուում Գ.ժթ գլխի միջնամասի նախադասութիւնը. «Այս մինչեւ ցայս վայր»: Նման մի արտայայտութիւն պատմիչն ունի Ա գրքի Դ գլխի վերջում. «Այս մինչ ցայս վայր ցուցումն ազգաբանութեանց», իսկ մէկ ուրիշը՝ Ա.ը գլխում. «Սակայն յայսմ վայրի նպատաւորէ մեզ Քերթողահայրն Մովսէս...»: Գուցէ, կարելի է իր աղբիւրի բնագրին Դասխուրանցու լրացումը համարել նաեւ քիչ անց հանդիպող «Սա ութերորդ էր ի Վարագ Գրիգորէ՝ առաջին իշխանէն Աղուանից» նախադասութիւնը: Այն չունի նախորդ կտորն ամբողջովին երկրորդող Ստեփաննոս Օրբէլեանը, իսկ «Միհրանեան» իշխանների ցուցակը (Բ.ժէ եւ Գ.իք գլուխներում) եւ ծագման առասպելը Դասխուրանցուն ծանօթ էին առնուազն երկու աղբիւրից<sup>23</sup>:

Մաշտոց Եղիվարդեցու այս պատմական երկը, որն իր շարադրանքի ոճով ամենից աւելի յիշեցնում է Ստեփաննոս Ասողիկի «Տիեզերական պատմութիւն»-ը (սակայն, իհարկէ, շատ աւելի նեղ ընդգրկումով), չափազանց ուշագրաւ աղբիւրագիտական նիւթ է պարունակում է.թ. դդ. Հայաստանի եւ յարակից երկրների պատմութեան ու մշակոյթի բազմաթիւ իրողոյթների (ուխարիաների) մասին, որոշ դէպքերում՝ եզակի: Դրանց համադրութիւնը այլ պատմական սկզբնաղբիւրների տեղեկութիւնների հետ (հայկական եւ օտար<sup>24</sup>)

23 Մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան, «Առանշահիկներ» եւ «Միհրանեանների» տոհմաբանական առասպելի պատմական հիմքերը, «Հայագիտական համաժողով 2, Երեւան, Հոկտեմբերի 17-19, 2013», Զեկուցումների դրոյթներ, Երեւան, 2013, էջ 47-49:

24 Օր.՝ մենք պարտադիր համադրութիւններ ենք կատարել արաբալեզու մատենագիրների հետ՝ ըստ Արաբական աղբիւրներ, Գ. թարգմ. բնագ-



1 Բարեյաղթը<sup>2</sup> Հերակղ Հոռվմայեցուց թագաւոր<sup>3</sup> զպէսպէս պատերազմունս վանեալ յիշատակ քաջութեան եթող<sup>4</sup> յաշխարհի: 2 Եւ<sup>5</sup> զկնի նորին նստի թագաւոր Հոռվմայեցուց որդի նորա Կոստանդին<sup>6</sup> ամս Գ: 3 Ի սորա աւուրս<sup>7</sup> տիրեցին Ասոր[ե]աց<sup>8</sup> Տաճիկք եւ արկին ընդ հարկաւ զեկեղեցիս սրբոյ քաղաքին Երուսաղեմի<sup>9</sup>. եւ Հայ թուականն<sup>10</sup> Զ լինէր:

4 Իսկ Կոստաս<sup>11</sup> սորին<sup>11</sup> որդի՝ ամս ԻԹ: 5 Ի սորա հինգ ամին Արաբեայ<sup>12</sup> կռիւն եղեւ, եւ ի վեցին Տաճիկք էին ի Հայս, եւ առաւ Դուին<sup>13</sup> ի Տաճկաց, եւ որք գերեցանն<sup>14</sup> լեւի<sup>15</sup> թուեցան:

6 Եւ ի<sup>16</sup> նորին ԺԹ-անն<sup>17</sup> նստի կաթողիկոս Հայոց տէր Ներսէս՝ ամս Ի. եւ<sup>18</sup> Հայ թուականն<sup>19</sup> ճԺ եւ մին<sup>20</sup> էր:

7 Սա էր հայրագիր նորին Կոստանտին<sup>21</sup> եւ գանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հաւտից<sup>22</sup> ի Քաղաքիդաշտի՝ զՍուրբն Գրիգոր, եւ ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց<sup>23</sup>: 8 Ընդ որ յաւէժ<sup>24</sup> հիացեալ ընդ շինուածն<sup>25</sup> ետ հրաման շինողացն գնալ զկնի<sup>26</sup> իւր<sup>27</sup>, զի զնոյնաձեւն<sup>28</sup> յարմարեսցէ ի պաղատանն: 9 Եւ ոչ ժամանեալ գաղատոսն<sup>29</sup> ի ճանապարհին<sup>30</sup> վախճանիւր<sup>31</sup>:

10 Ի<sup>32</sup> ճեզ-երորդ<sup>33</sup> թուականութեանն Հայոց եկն Մահմետն երկրորդ ի Հայս<sup>34</sup>. եւ աճապարեալ ընդ աշխարհն Աղուանից՝ մտանէ ի Չորայ<sup>35</sup>: 11 Իսկ ապստամբեալ Հայոց՝ արգելին զՏաճիկն<sup>36</sup> ի Դունի<sup>37</sup>: 12 Եւ կթ<sup>38</sup> հազարս ի Տաճկացն սպանին՝ ածեալ զար<sup>39</sup> բազում ի Հոռոմոց: 13 Եւ ի նմին ամին<sup>40</sup> եղեւ զրաւ զարմիցն<sup>41</sup> սրբոյն Գրիգորի:

1 *abclrv չիք Մաշտոցի Եղիվարդեցույ ... Պատմութիւն (I տող) (վեր. ըստ O)*  
2 *abclrv [Գլուխ] ԺԵ. Որ ինչ յաւուրս որդույն (b որդույն, clrv չիք որդույն) Հերակղի (bclrv Հերակղի) եւ թողին գործք: Բարեյաղթ (c Բարեյաղթ, I Բարեյաղթ) փխ Բարեյաղթ (վեր.)*  
3 *bl Հոռոմայեցուց (b հոռոմայեցոց) թագաւորն Հերակղիոս, crv թագաւորութիւնն Հոռոմայեցոց, որ Հերակղիոս փխ Հերակղ Հոռվմայեցուց թագաւոր (a)*  
4 *a թողեալ փխ եթող (bclrv)*  
5 *bclrv չիք Եւ (a)*  
6 *bclrv նորա թագաւորէ Կոստանդինոս որդի նորա փխ նորին նստի ... Կոստանդին (a, I տող)*  
7 *bcrv յաւուր փխ աւուրս (al)*  
8 *a Ասորաց, bclrv Ասորոց փխ Ասորեաց (վեր. ըստ յաջորդի, տե՛ս նախ. 149, ծմթ. 38)*  
9 *crv Երուսաղեմի փխ Երուսաղեմի (abl)*  
10 *bclrv թիւս փխ թուականն (a)*  
11 *bclrv նորին փխ սորին (a)*  
12 *a Արաբիս, bcrv Արաբեայ փխ Արաբեայ (I)*  
13 *crv Դունիս փխ Դունիս (abl)*  
14 *bclrv գերեցան փխ գերեցանն (a)*  
15 *crv Լեւի փխ Լեւի (abl)*  
16 *cl չիք ի (abr)*  
17 *b ԺԹ ամին, clrv ԺԹ փխ ԺԹ-անն (a, իմա՝ ինչ-եստասանն)*  
18 *bcl չիք եւ (arv)*  
19 *bclrv թիւն փխ թուականն (a)*  
20 *bcrv ԾԺԱ, I հարիւր եւ մետասան փխ ԾԺ եւ մին (a)*

21 *blrv Կոստանդին, c Կոստանդի փխ Կոստանտին (a)*  
22 *bclrv հոտից փխ հաւտից (a)*  
23 *l Հոռոմոց*  
24 *crv յաւէժ, l յաւէտ փխ յաւէժ (a) / b չիք յաւէժ*  
25 *l շինածն*  
26 *l զկնիս*  
27 *bclrv թագաւորին փխ իւր (a)*  
28 *crv նոյնս ձեւն փխ զնոյնաձեւն (abl)*  
29 *a գաղտուն փխ գաղատոսն (bclrv)*  
30 *crv ճանապարհի փխ ճանապարհին (abl)*  
31 *a վաղճանիւր, bclrv վախճանի փխ վախճանիւր (վեր.)*  
32 *abclrv [Գլուխ] ԺԶ. Ապստամբութիւն (b Յապստամբութիւնն, l Ապստամբութիւնն) Հայոց (b չիք Հայոց) եւ Մահմետին գալ (bclrv Մահմետի գալն) ի Հայս եւ առումն (a առնումն) Սեւանայ (b Երեւանայ) եւ մահն Մահմետի: Ի փխ Ի (վեր.)*  
33 *bclrv ԾԽԶ փխ ԾԽԶ-երորդ (a)*  
34 *abclrv Հայք փխ Հայս (վեր. ըստ այլոց)*  
35 *a Չորայ, bclrv Չորայ փխ Չորայ (վեր., հմմ. +9 ծմթ.)*  
36 *crv զՏաճիկս, l զՏաճիկքն փխ զՏաճիկն (ab)*  
37 *bl Դունիս, crv Դունիս փխ Դունիս (a)*  
38 *bclrv ԿԸ փխ ԿԲ (a)*  
39 *blrv զօր, c գոր փխ զար (a)*  
40 *clrv ամի փխ ամին (ab)*  
41 *a զարմից փխ զարմիցն (bclrv)*

14 Եւ<sup>1</sup> դարձաւ Մահմետն<sup>2</sup> ի Չորայ<sup>3</sup>. գայ<sup>4</sup> պաշարէ զՍեւան ծովապատն բերդ ամս Գ: 15 Եւ ապա առնու եւ ի սուր սուսերի արկանէ<sup>5</sup>, զորս գտանէ ի նմա<sup>6</sup>: 16 Եւ անտի<sup>7</sup> անցեալ ի Հայս<sup>8</sup> եհար<sup>9</sup> զՀոռոմ սպայն<sup>10</sup> եւ զՀայն: 17 Եւ զորս ոչ կարաց ըմբռնել<sup>11</sup>, դարան գործեալ մեծապէս<sup>12</sup> երդմամբ, դառով եւ խաբէութեամբ<sup>13</sup> առ ինքն ժողովեաց զամենայն զխաւորս Հայոց, եւ տարեալ ի նախճաւան<sup>14</sup> քաղաք՝ ութ հարիւր այր յեկեղեցիսն արկեալ կենդան[ւ]ոյն<sup>15</sup> այրեաց. եւ նայր ի հրամ նոյնպէս այրեաց եւ զսինիքորս<sup>16</sup> նոցա սրահար սատակեաց: 18 Եւ այսորիկ պատճառ կորստեանն եղեւ ի նոսա<sup>17</sup> այն<sup>18</sup>, զի առ հասարակ շնչեալ ի<sup>19</sup> նոսա հոգի<sup>20</sup> մոլորութեան, զի արհամարհանաւք<sup>21</sup> այսպն առնէին զհայրապետս<sup>22</sup>, զքահանայս եւ զկրանաւորս<sup>23</sup>

ճանճրացուցանէին<sup>24</sup>: 19 Եւ թէպէտ կրեցին<sup>25</sup> Հայաստանեայքն զհարուածն<sup>26</sup> զայն, սակայն ոչ եթող Տէր<sup>27</sup> Մահմետի զվրէժն զայն<sup>28</sup>: 20 Այլ ի հասանել<sup>29</sup> նորա յԱսորիս, դժնդակ ախտ մահու զնա պաշարեալ եւ<sup>30</sup> զեւթն<sup>31</sup> ամիս հոգեհանս<sup>32</sup> կացեալ՝ հազիւ ուրեմն եւ սատակիւր<sup>33</sup>: 21 Եւ<sup>34</sup> երիցս թաղեալ՝ վերընկէց<sup>35</sup> լինէր, զի<sup>36</sup> երկիր ոչ ընդունէր զնորա գարշելի: 22 Ապա կալեալ շուն մի՝ շամփրեցին ընդ մարմինն Մահմետի<sup>37</sup>, եւ այնպէս ծածկեաց<sup>38</sup> երկիր զչարն զայն:

23 Յետ այսորիկ զՇերոյ<sup>39</sup> Աղուանից իշխան<sup>40</sup> ազատաւքն<sup>41</sup> հանդերձ տարան ի Տարաւն<sup>42</sup> յԱսորիս. եւ Հայ թիւն ճԾԴ<sup>43</sup> էր:

24 Եւ ի միւսում ամին<sup>44</sup> զՇիրակայ տէրն տարան յԱսորիս: 25 Եւ յետ երկուց ամաց անց<sup>45</sup> Մրուան<sup>46</sup> Տաճկաց իշխանն<sup>47</sup> ի Գելան<sup>1</sup> եւ ոչ կա-

1 *bclrv չիք Եւ (a)*  
2 *a Մահմետն փխ Մահմետն (bclrv)*  
3 *abcrv Չորայ, l Չորայս փխ Չորայ (վեր., հմմ. -9 ծմթ.)*  
4 *bcrv գա փխ գայ (al)*  
5 *bcrv արկ, l արկ փխ արկանէ (a)*  
6 *bclrv ի նմայն եզիտ (b եկին) փխ գտանէ ի նմա (a)*  
7 *b անտի*  
8 *bclrv Հայք փխ Հայս (a)*  
9 *l Էհար*  
10 *a զՀոռոմ ըսպայն, b զՀոռոմ այն, crv զՀոռոմստայն, l զՀոռոմս այն փխ զՀոռոմ սպայն (վեր.)*  
11 *a ըմբռնեալ փխ ըմբռնել (bclrv)*  
12 *bclrv չիք դարան գործեալ մեծապէս (a)*  
13 *bclrv խաբեալ փխ խաբէութեամբ (a)*  
14 *a Նախճաւան փխ Նախճաւան (bclrv, հմմ. ստորեւ, նախ. 111, ծմթ. 31)*  
15 *abclrv կենդանույն փխ կենդանույն (վեր. ըստ MPE)*  
16 *l զսինիքորս փխ զսինիքորս*  
17 *bclrv այսմ կորստեանն (l կորստեան) նոցա պատճառ եղեւ փխ այսորիկ պատճառ ... նոսա (a, I տող)*  
18 *b այս փխ այն*  
19 *bclrv ի շնչել փխ շնչեալ ի (a)*  
20 *b ոգի*  
21 *bclrv արհամարհանաւք փխ զի արհամարհանաւք (a)*  
22 *bclrv զհայրապետ եւ փխ զհայրապետս (a)*  
23 *bclrv զկրանաւորս փխ զկրանաւորս (a)*

24 *crv ծանրացուցանէին փխ ճանճրացուցանէին (abl)*  
25 *a կրեցին փխ կրեցին (bclrv)*  
26 *a զհարուածն փխ զհարուածն (bclrv)*  
27 *b Տէր Աստուած (clrv)*  
28 *a չիք սակայն ոչ ... զվրէժն զայն (bclrv) (I տող, տե՛ս զայն ... զայն)*  
29 *b հասանելն, l հասանիլ փխ հասանել (acr)*  
30 *bclrv ըմբռնեալ փխ պաշարեալ եւ (a)*  
31 *a զեւթն, bclrv զեթն փխ զեւթն (վեր.)*  
32 *a յոգեհանս, b հոգեհ, clrv հոգեհանս փխ հոգեհանս (վեր.)*  
33 *bcrv սատակեր, l սատակիւր փխ եւ սատակիւր (a)*  
34 *a չիք Եւ (bclrv)*  
35 *br վերընկեց փխ վերընկեց (aclv)*  
36 *a չիք զի (bclrv)*  
37 *b Մահմետին*  
38 *b ծածկեցին*  
39 *bclrv Ծիւրոյ փխ զՇերոյ (a)*  
40 *bcrv իշխանն փխ իշխան (al)*  
41 *bclrv ազատաւքն փխ ազատաւքն (a)*  
42 *bclrv չիք ի Տարաւն (a, տե՛ս տարան ... Տարաւն)*  
43 *abclrv ԾԾԳ փխ ԾԾԴ (վեր. ըստ Սամուէլ Անեցու Յաւերուածում տպագրուած Թղթի, որը Շերոյին նշում է Միքայէլ կաթողիկոսի ձեռնադրումից յետոյ, այսինքն՝ 705 թ. վերջերին. տե՛ս ՀԱ, 2004, սն. 292, ծմթ. 39 եւ հմմ. երկաթագիր Դ - Գ)*  
44 *bclrv զմիւս տւրիս փխ ի միւսում ամին (a, իմա՝ Հայոց ԾԾԵ թիւ = 706 թ. Յունիս - 707 թ. Յունիս)*  
45 *l Էանց փխ անց (abcrv)*  
46 *b րուան փխ Մրուան*  
47 *b ան, l իշխան փխ իշխանն (acr)*

րաց մտանել: 26 եւ՝ ել հազրաց տէրն ութսուն հազար արամբք եւ առ՝ զԱղուանս. եւ ճԾԸ էր թիւն՝:

27 եւ յետ երկուց ամաց, ի թուականութեանն Հայոց ճԿ եկն Աբղլ Ազիլ իշխանն Տաճկաց յԱղուանս եւ նստաւ ի Պարտաւ: 28 Անդ՝ ածին զՄանկիկ՝ եւ զՄերդազատ՝ եղբարս երկուսին, որք էին ի տոհմէ ազատաց, առաջի նորա: 29 եւ վասն հաւատոյ քրիստոնէութեանն՝ բազում եւ ազգի ազգի տանջեալք՝ Մանկիկն երանելի զվկայութեանն՝ աւուն ժառանգեալ՝ պսակեցաւ ի Քրիստոսէ: 30 եւ եղան պատուական նորա նշխարք ի մեծ եկեղեցւոջն՝ Պարտաւայ՝ ի Սուրբն՝ Գրիգոր: 31 Իսկ եղբայրն Մերդազատ ոչ ժուժեալ՝ տանջանաջն՝ առաջի բազմամբոխ ժողովոյն՝ ուրացաւ զՔրիստոս Աստուած, եւ ապա ի զեղջ եկեալ՝ յետոյ դառն եւ մեծ արտասուաւք՝ հաշտեցոյց՝ զոր խռովեցոյցն: 32 Նա եւ զամենայն ժամանակս կենաց իւրոց՝ աւագան քառութեան զարտաւար՝ իւր արարեալ լուանայր, զորս աղտեղեալ գթեացն եւ հեծեծանս ի խորոց սրտին՝ առաքէր առ գիտակն՝ գաղտնեաց, մինչեւ ցելս անձին իւրոյ ի սուգ անմխի-

թար մնայր: 33 Այլ՝ որ ողորմածն է՝ եւ զթած զնա ընդ մարտիրոսս՝ ընկալեալ՝ նշանք դարմանալիք լինէր՝ ի ժամ մահու նորա:

34 եւ ի նոյն ամի անց՝ Աբղլ Ազիլ զԿուր՝ գետով յայն կողմն:

35 եւ զկնի Գ ամաց եկն Մսլիման՝ աւերեաց զԴարբանդ եւ եմուտ ի հազիրս, ուստի՝ ոչ զարեաց՝ ելանել: 36 Ապա թողու զբանակ կազմն ամենայն ընչիւք եւ զհարճս անգամ՝ վերջապահս իւր առնէ՝ եւ զեռանշահիկն զՎաչագան՝ ի Պատրիկեան Աղուանից իշխան՝ զբաջ կորովի աջողակ աղեղնաւորն՝ հանդերձ զաւրաւքն իւրովք յետոյ իւր արարեալք, յորմէ զկնի եկեալ հազիրքն՝ պարտեցան՝ դարձեալք ի փախուստ: 37 Այսպէս զերծեալ Մսլիման՝ ելանէր ընդ Վրաց կողմն:

38 Իսկ ի ճՂԴ թուականութեանն՝ Հայոց՝ ամառն՝ մահ անասնոց, եւ ձմեռն՝ աշխարհագիրն՝ Հերթի, որ արկ՝ զմարդ եւ զանասուն եւ զսահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայութեան:

1 b լան, crv ցԱլան, l յԱղան փխ Գելան (a)  
2 crv Զի փխ Եւ (abl)  
3 al էառ փխ առ (bcrv)  
4 bclrv ի ճԾԸ թուականին փխ եւ ճԾԸ էր թիւն (a)  
5 bclrv ի յԱղուանս փխ յԱղուանս եւ ... Պարտաւ (a, տե՛ս յԱղուանս ... Անդ)  
6 l Անտ  
7 a զՄանուկ փխ զՄանկիկ (bclrv, հմմ. +3 տող)  
8 b զՄարդազատ  
9 b քրիստոնէութեան, l քրիստոնէութեան փխ քրիստոնէութեանն (acrv)  
10 l տանջեալ  
11 c վկայութեան, rv զվկայութեան փխ զվկայութեանն (abl)  
12 bcrv եկեղեցւոյն փխ եկեղեցւոյն (abl)  
13 ab Պարտաւայ փխ Պարտաւայ (bclrv)  
14 l Սուրբ  
15 bclrv ժուժեալեալ փխ ժուժեալ (a)  
16 bclrv հրապարակին փխ ժողովոյն (a)  
17 bclrv արտասուոք փխ արտասուալք (a)  
18 a իւր փխ կենաց իւրոց (bclrv)  
19 bclrv զարտաւարն փխ զարտաւար (a)  
20 a սրտէն փխ սրտին (bclrv)  
21 crv գիտակն փխ գիտակն (abl)

22 bclrv էր փխ է (a)  
23 bcrv մարտիրոսս, l մարտիրոսս փխ մարտիրոսս (a)  
24 l լինէին  
25 a անցաւ, l էանց փխ անց (bcrv)  
26 crv ընդ Կուր փխ զԿուր (abl)  
27 bclrv Մսլիման փխ Մսլիման (a)  
28 a Ղազիրս, ուստեք փխ Սազիրս, ուստի (bclrv)  
29 a զարացել, bclrv ոչ զարեաց փխ ոչ զարեաց (վեր.)  
30 c անգամս  
31 l առնէ իւր փխ իւր առնէ  
32 b զՎաչագան  
33 bclrv իւրով (l իւրոք) զօրօքն զքաջ կորովի աջողակ փխ զքաջ կորովի ... արարեալ (a, 2 տող)  
34 bclrv պարտեալ փխ պարտեցան (a) -  
35 bclrv Մսլիման՝ ելանել (l ելանէ) փխ Մսլիման՝ ելանէր (a)  
36 bclrv թուականին փխ թուականութեանն (a)  
37 bclrv չիք Հայոց (a)  
38 b աշխարհագիր  
39 l էարկ փխ արկ (abcrv)  
40 b ի ծառայութեան (aclrv)

39 ի սոյն ժամանակս զՋեւանշեր իշխան Աղուանից՝ սպանին ամթեղութեան: 40 եւ ի նոյն ամի՝ մեռաւ Սմբատ Հայոց իշխանն: 41 եւ եղև տարին՝ սով խիստ. որ էր թիւն՝ Հայոց ճՂԵ:

42 եւ երից ամաց՝ այլ անցելոց Ջառահ երկրորդ անգամ մտանէ ընդ Աբխազս ի հազիրս: 43 եւ ի միւսում ամի՝ ել հազրաց՝ տեառն որդին՝ եւ սպան՝ զՋառահ՝ եւ ձերբակալ արար զՋագիկ:

44 եւ ի՛ 14 ճՁ թուականին դարձեալ Մսլիման շինէ զԴարբանդ յանուն Տաճկաց, այլ զկաթողիկոսարանն՝ Արեւելից ոչ աւերէ, որ դեռ եւս կայ՝ ի նմա:

45 Յաւուրս [Միքայելի Աղուանից կաթողիկոսի] լինի խառնակութիւնն իշխանացն Աղուանից. Վարազոյ՝ Վախտանգայ՝ որդի, թոռն Վարազմանայ՝, զթոռնակիցն իւր զՎարդանուր-

հի՝ արար կինն, եւ տէր Միքայելն՝ տարագրեալ զնա, թէ՛ «Մի՛ յանդգնիր՝ առնել՝ զի թոռնք էք»: 46 Իսկ նորա՝ զկորստեան խորհեալ խորհուրդ՝ գրէ առ Թաղիղէ՝ Վրաց կաթողիկոսն՝՝ աւրհնել զանարէն՝ ամուսնութիւնն: 47 եւ շարափառն այն այր յայսպէս հրամայեաց. «Եթէ՛ զուր յիմում խոստովանութեան՝ էք՝ աւրհնեալ՝ էք, ապա եթէ՛ յԱղուանից աւանդութեանն՝ էք, դուրք գիտէք»:

48 Յայնժամ հայրապետն Աղուանից Միքայել արար ժողով ուխտի եկեղեցւոյ՝ իւրոյ եւ՝ կոչէ առ ինքն զհռչակելի այրն՝ զՍողոմոն, որ Մաքենոցացն սուրբ ուխտին էր առաջնորդ՝ եւ ըստ ժամանակին Հայաստանեաց՝ էր պարծանք: 49 եւ գումարեալ զսոսա ամենեսին ի Շամբոր ի Բերդովանս՝ միաբան ժողովոյն՝ նշովեցին զտունն Վարազոյի: 50 եւ ի նոյն ժա-

1 bclrv զՋառահիւր Աղուանից իշխանն փխ զՋեւանշեր իշխան Աղուանից (a)  
2 bclrv միթեղութեան փխ ամթեղութեան (a)  
3 b ամիս  
4 bclrv իշխան փխ իշխանն (a)  
5 bclrv ի տարին (a)  
6 a թիւ փխ թիւն (bclrv)  
7 bl ամ փխ ամաց (acrv)  
8 bclrv ամին փխ ամի (a)  
9 bclrv ի Սազրաց (a)  
10 a տեռնորդին փխ տեսուն որդին (bclrv)  
11 b զսպան  
12 crv զՋառահն փխ զՋառահ (abl)  
13 b չիք եւ ձերբակալ ... զՋագիկ  
14 c չիք ի  
15 c զկաթողիկոսարանն  
16 a կա փխ կայ (bclrv)  
17 l նմայ  
18 abclrv [Գլուխ] ժ.Գ. Վասն ոչ առնել (bcrv առնելոյ, l չառնելոյ) առ ազգինս խնամութիւն (bclrv ազգայինս խնամատրութիւն)՝ Միքայելի (brv Միքայելի, c Միգայելի, l Միքայիլի) Աղուանից կաթողիկոսի (cr կաթողիկոսի) արարեալ ժողով: Փոխանորդէ զաթոռ հայրապետութեանն (b հայրապետութեան) Աղուանից երջանիկն Միքայել զկնի Սիմեոնի (a Սամուելի). եւ եկաց (bclrv կեցեալ) ամս ԼԵ: Յաւուրս (a Յաւուր) սորա փխ Յաւուրս Միքայելի ... կաթողիկոսի (վեր.)  
19 a առնակնութիւն փխ խառնակութիւն (bclrv)  
20 a Վախտանգա փխ Վախտանգայ (bclrv)  
21 b Վարազմանա

22 a Վարդանաւորի, b զՎարդանուրին, clrv զՎարդանուրի փխ զՎարդանուրի (վեր., հմմ. նախ. 59, ճճթ. 6)  
23 b իւր կին (aclrv)  
24 b Միքայել  
25 bclrv տարագրեաց փխ տարագրեալ (a)  
26 bcrv խառնակել փխ խառնակել (abl)  
27 crv առնուլ, l եւ առնու փխ առնել (ab)  
28 b զնորա  
29 bclrv զխորհուրդ փխ խորհուրդ (a)  
30 bclrv Թաղիղէ փխ Թաղիղէ (a)  
31 c կաթողիկոս  
32 bclrv օրհնել զանօրէն փխ արհնել զանարէն (a)  
33 a եթե, bclrv թէ փխ եթէ (վեր.)  
34 bclrv խոստովանութեանս փխ խոստովանութեան (a)  
35 bclrv օրհնած փխ արհնեալ (a)  
36 bclrv աւանդութեանն փխ աւանդութեան (a)  
37 bclrv արարեալ փխ արար (a)  
38 bcrv եկեղեցւոյ փխ եկեղեցւոյ (abl)  
39 bcrv չիք եւ (abl)  
40 bclrv զհռչակելին Սողոմոն փխ զհռչակելի ... զՍողոմոն (a)  
41 a Մաքենացոցն էր առաջնորդ ուխտին սուրբ փխ Մաքենոցացն սուրբ ... առաջնորդ (bclrv, l տող)  
42 b Հայաստանեացն, clrv Հայաստանեացն փխ Հայաստանեաց (a)  
43 bclrv չիք Եւ գումարեալ ... Բերդովանս (a, l տող, տե՛ս պարծանք ... \*Բերդովանք)  
44 bclrv ժողովն փխ ժողովոյն (a)

մու՛ հասանեն Տաճիկք եւ՛ ի գոգ մարն՝ փողոտեցին՝ սրով, եւ զմիւս որդին ձի տարեալ սպան:

51 Եւ գրեցին թուղթ ժողովեալքն առ Թաղիղէ Վրաց եպիսկոպոս՝, եթէ՞ «Ձի՛ իշխեցեր լուծանել զկանոնեալ՝ սուրբ առաքելոցն աշակերտաց՝, որք յԱնտիոք՝ ժողովեալ՝ տարագրեցին՝ զՊաւղոս՝ Սամոստացին՝ ի Սուրբ եկեղեցոյ՝ եւ սահմանեցին տառս կանոնականս, եթէ՛ «Մի՛ որ իշխեսցէ զազգական առնուլ ի կին՝», եւ սրբոյն Աթանասի կանոնական հրաման՝, եթէ՛ «Ձէ՛ ամուսնութիւն, այլ պոռնկութիւն», եւ երանելւոյն՝ Բարսղի՛ վասն՝ սորին գործոյ՝ ասացեալ: 52 Արդ, մեք՝ ուղղափառութեան ժողովքս, եւ զքեզ նզովեցաք ընդ ամենայն հերձուածողսն՝, եւ արդարադատին Քրիստոսի մատուցուք՝ բազմապատիկ փառս»:

- 1 bclrv նոյնժամայն *փիս* ի նոյն ժամու (a)
- 2 bclrv *չիք* եւ (a)
- 3 bclrv գոգք մօրն *փիս* գոգ մարն (a)
- 4 crv փողոտեն *փիս* փողոտեցին (abl)
- 5 a էպիսկոպոս *փիս* եպիսկոպոս (վեր. ըստ այլոց)
- 6 bclrv Վրացն Թալիլէ, թէ *փիս* Թաղիղէ Վրաց ... եթէ (a)
- 7 crv զկանոնս *փիս* զկանոնեալ (abl)
- 8 bclrv աշակերտացն *փիս* աշակերտաց (a)
- 9 a Անտիոք, b յԱնտիոք *փիս* յԱնտիոք (clrv)
- 10 b տարագրէ
- 11 bclrv զՊողոս *փիս* զՊաւղոս (a)
- 12 b Սամաստացին
- 13 bcrv եկեղեցոյ *փիս* եկեղեցոյ (al)
- 14 a եթէ, bclrv թէ *փիս* եթէ (վեր.)
- 15 bclrv զազգայինս առնել կին *փիս* զազգական ... կին (a)
- 16 bclrv *չիք* սրբոյն Աթանասի ... հրաման (a, I տող)
- 17 a եթէ, bclrv թէ *փիս* եթէ (վեր.)
- 18 abclrv երանելոյն *փիս* երանելոյն (վեր. ըստ մատուցողի, հմմ. -5 ծնթ.)
- 19 bclrv յաղագս *փիս* վասն (a, ընկալելի է՝ [է] վասն)
- 20 b *չիք* գործոյ (aclrv)
- 21 bcrv հերձուածողս, l հերձուածողս *փիս* հերձուածողսն (a)
- 22 bclrv հատուցուք *փիս* մատուցուք (a)

53 Որ՝ ինչ յերկերիւր թուականութեանն՝ Հայոց ցայսր՝ գործք՝ լեալ ի սահմանս Արեւելից՝:

54 Ընդ ժամանակս ընդ այսոսիկ սփռեցաւ՝ տարածեցաւ յուրոտս՝ երկրի բոնութիւն հարաւայնոցն ազգի խիստ եւ կսկծանող՝, որ իբրեւ հուր՝ լափեաց զամենայն գեղեցկութիւն եւ զփառս մարդկան. ըստ սրբոյն Պաւղոսի՝ բանին իմանալի այն՝ եղեւ «ժամանակ ապստամբութեան»՝, եւ եթէ՛ «Դատաւոր հասեալ է առ դուրս, եւ մերձ է՝ ժամն ահարկու՝, արն՝ շար եւ անաշառ»: 55 Այսպէս զազանացեալ իսմայելեանն՝ Հագարայինքն յինքեանս՝ գրաւեցին զփափկութիւն երկրի, եւ՝ ծով՝ եւ ցամաք ունկնդիր եղեւ կարապետաց նեռինն՝ որդւոցն՝ կորստեան: 56 Եղեւ այս տանս Աղուանից զրկանք մեծապէս, զի զմայրաքաղաքն Պարտախլեցին յիշխանացն Աղուանից Տաճիկք ըստ իրեանց անառակ ազգաշաղախութեանն: 57 Եւ որպէս զառաջինն՝ աթոռ իշխանութեանն ի-

- 23 abclrv [Գլուխ] ԺԹ. Որ *փիս* Որ (վեր., զլիսագրի բնագիրը Դասխտրանցու աղբիւրինն է, տե՛ս հետազօտութեան բաժնում)
- 24 b թուականն, crv թուականին, l թուականէն *փիս* թուականութեանն (a)
- 25 a այս *փիս* ցայսր (bclrv)
- 26 a Աղուանից *փիս* Արեւելից (bclrv)
- 27 bclrv այնոսիկ սփռեալ *փիս* այսոսիկ սփռեցաւ (a)
- 28 bclrv ընդ ուրոտս *փիս* յուրոտս (a)
- 29 bclrv *չիք* խիստ եւ կսկծանող (a)
- 30 bclrv գիւր *փիս* հուր (a)
- 31 bclrv Պողոսի *փիս* Պաւղոսի (a)
- 32 bclrv *չիք* իմանալի այն (a)
- 33 a ապստամբութեան
- 34 a թէ *փիս* եթէ (bclrv)
- 35 bclrv *չիք* է (a)
- 36 c արհարհու, l արհարկու *փիս* արհարկու (abrv)
- 37 bclrv օրն *փիս* արն (a)
- 38 l իսմայիլեան
- 39 l եւ յինքեանս
- 40 l *չիք* եւ
- 41 c զծով
- 42 l նեռին
- 43 a որդոցն, b ոգոցն, clrv որդոյն *փիս* որդոցն (վեր., հմմ. +28 ծնթ.)
- 44 bl զառաջինն *փիս* զառաջինն (acrsv)

րեանց արկին ի Դամասկոս Ասորեստանեացն՝, նոյնպէս աստ յԱղուանս նստուցին ի Պարտախլալ արքունեացն եւ ծծել զպարարտութիւն երկրիս: 58 Յորոց մի ոմն յարքունեացն եկեալ ի Պարտախ, եւ Հայաստանեացն՝ սակս աշխարհին հոգւոց զհայրապետն՝ իրեանց՝ զտէր Եսայի՛, հանդերձ եպիսկոպոսաւքն՝ յղեալ առ նա առաքեն: 59 Ջորոյ զգալուստն լուեալ տիկնոջն Վարդանուրհեայ՝ կարեւլէր՝ եղեալ ի դատաստանացն Աստուծոյ, դիմէ ընդ առաջ նորա՝ լինել՝ կարեկից՝ իւրում տարժանելի՝ աղէտիցն՝, զոր ի ձեռանէ Տեառն արբ՝ զբաժակ՝ դառնութեան՝ ըստ՝ վերագոյն գրելոցն: 60 Եւ երանելի հայրապետն Հայոց՝ խոնարհեալ յարտասուս կնոջն եւ աւթեվանս՝ առ նմա կալեալ՝ ցայգապաշտմամբ մաղթանս առ Աստուած մատուցանէր առ ի լուծանել զանէծս՝ առաջնոց հայրապետացն: 61 Ընդ նմին եւ՝ տէր Սողոմոն Աղուանից կաթողիկոս իւրովք՝ եպիսկոպոսաւքն՝ ի խորհուրդ եկեալ՝ լուծանէ եւ նա զկապանս աթոռակալացն իւրոց: 62 Եւ վասն իւրաքանչիւրոցն՝

- 1 bl Ասորեստանեացն *փիս* Ասորեստանեացն (acrsv)
- 2 bclrv *չիք* Եւ Հայաստանեացն (a)
- 3 l եւ զհայրապետն
- 4 a տէր Եսայիս *փիս* զտէր Եսայի (bclrv)
- 5 bclrv եպիսկոպոսոքն *փիս* եպիսկոպոսաւքն (a)
- 6 a Վարդանուրհեայ, bcrv Վարդանուրհեայ, c Վարդանուրհեայ, l Վարդանուրհեայ *փիս* Վարդանուրհեայ (վեր., հմմ. վերեւում, մասի. 45, ծնթ. 22)
- 7 a կարեւլէր, b կարեւլեր *փիս* կարեւլեր (clrv)
- 8 a յառաջ *փիս* առաջ Աորա (bclrv)
- 9 l յինիլ
- 10 a կարեկից *փիս* կարեկից (bclrv)
- 11 bl տաժանելի *փիս* տարժանելի (acrsv)
- 12 bclrv աղետիցն *փիս* աղէտիցն (a)
- 13 l Էսայր *փիս* արբ (abcrsv)
- 14 bcrv զբաժակն *փիս* զբաժակ (acl)
- 15 c *չիք* ըստ (ablrsv)
- 16 a արթեանս, bcrv օթեանս, l արթեանս *փիս* արթեանս (վեր.)
- 17 bclrv զանէծսն *փիս* զանէծս (a)
- 18 b եւ էր (aclrv)
- 19 a իւրաք *փիս* իւրովք (bclrv)
- 20 bclrv եպիսկոպոսոքն *փիս* եպիսկոպոսաւքն (a)
- 21 clrv երկաքանչիւրոցն *փիս* իւրաքանչիւրոցն (ab)

խնդրոցն՝ արմատն՝ մի մնաց տիկնոջն՝ վշտագնելոյ:

63 Եւ Վարազ Տրդատայ՝ Վարազմանայ՝ որդւոյ՝, Աստուած շնորհեաց կեանս: 64 Եւ որդի նորին՝ Ստեփաննոս կիսարեայ՝ վախճանեցաւ, եւ նորին եղբայր Վարազման վրիպեալ ընկղմեցաւ ի Կուր գետ. նա եղեւ գերեզման նորա: 65 Իսկ Ջեանշերիկ՝ նորին եղբայր, մնաց ժառանգ: 66 Այս մինչեւ ցայս վայր:

67 Իսկ ի լնու Մշ թուոյ՝ Հայոց ելին գաղտաբար ի Պարտախ արք ընտիրք ի Տաճիկաց եւ յաւարի առին զԱմարաս գաւառ, եւ գերի առեալ իբրեւ ոգիս հազարս՝ եւ ի Մեծիրանց սահմանի՝ ամրացան, ի տեղւոջն, որ կոչի Շիկաբար: 68 Յայնժամ արի՛ ի շքեղատեսակն Սահլ՝ ի Սմբատեան Եռանշահիկն տէր քաջազար եղբարաւքն իւրովք եւ զարաւքն ի-

- 22 cl խնդրոյ *փիս* խնդրոց (abrv)
- 23 bclrv արմատն *փիս* արմատ (a)
- 24 c կնոջն *փիս* տիկնոջն (ablrsv)
- 25 acrv Տրդատայ *փիս* Տրդատայ (bl)
- 26 abcrv Վարազմանայ *փիս* Վարազմանայ (l)
- 27 bcrv որդոյ *փիս* որդոյ (al)
- 28 bcrv Աորա *փիս* Աորին (al)
- 29 a կիսարեայ, bcrv կիսորեայ, l կիսորեայ *փիս* կիսարեայ (վեր.)
- 30 a վախճանեալ *փիս* վախճանեցաւ (bclrv)
- 31 bclrv Ջուանշերիկ *փիս* Ջեանշերիկ (a)
- 32 b *չիք* Աորին եղբայր (aclrv)
- 33 վերջինն մատուցողինը (Այս մինչեւ ... վայր), գուցէ, կարելի է համարել Դասխտրանցու լրացումն իր աղբիւրի բնագրին. հմմ. Ա.դ զլիսի վերջում (Այս մինչ ցայս վայր ցուցումն ազգաբանութեանց) եւ Ա.ք զլիսում (Սակայն յայսմ վայրի մատուցողն մեզ հերթողաբարն)
- 34 bclrv թուոյն *փիս* թուոյ (a)
- 35 a գաղտաբար *փիս* գաղտաբար (bclrv)
- 36 b ընդիրք
- 37 bclrv *չիք* ի (a)
- 38 bclrv հազար *փիս* հազարս (a)
- 39 a Մեծիրանց, bclrv Մեծիրանց *փիս* Մեծիրանց (վեր. ըստ յաջորդի, տե՛ս մասի. 151, ծնթ. 47)
- 40 b սահմանի իւր (aclrv)
- 41 a ամրացեալք *փիս* ամրացան (bclrv)
- 42 bclrv *չիք* տեղւոջն, որ կոչի (a, տե՛ս ի ... կոչի)
- 43 b *չիք* արի
- 44 a Սահլ *փիս* Սահլ (bclrv)
- 45 bclrv *չիք* քաջազար եղբարաւքն (a)

րեանց ի<sup>1</sup> լուսանալ առաւարտուն<sup>2</sup> ի վերայ յար-  
ձակեալ՝ առ հասարակ դիւթաւալ<sup>3</sup> զնոսա ցիր եւ  
ցան կացուցանէին<sup>4</sup> եւ որպէս յառիւծու ժանեաց<sup>5</sup>  
զգերեալսն ի բաց կորզէին<sup>6</sup>:

69 եւ ի նոյն ամի<sup>7</sup> ասպատակեաց Սեւա-  
դայ<sup>8</sup> աշխարհաւերն<sup>9</sup> Տաճիկ, որ Աւառանշան ա-  
նուն ճանաչիր, ի սահմանս Հայոց<sup>10</sup>: 70 եւ յա-  
ւարի առեալ զաշխարհս ամենայն՝ դառնայ<sup>11</sup> ի  
Սիւնիս եւ<sup>12</sup> ամրանայ<sup>13</sup> ի բերդատեղի<sup>14</sup> աւա-  
նին<sup>15</sup> Շաղատու<sup>16</sup>, որ է<sup>17</sup> ի գաւառին<sup>18</sup> Մղկաց:  
71 եւ տէր<sup>19</sup> Վասակ՝ Սիւնեաց տէր, ածեալ զԲա-  
բան ի Պարսից՝ եհար<sup>20</sup> զնոսա եւ արար փախս-

- 1 *bclrv* ազատովք զօրօքն (*b* զօրօք) ընդ *փյս* զարարքն իրեանց ի (*a*)
- 2 *bclrv* առաւարտուն *փյս* առաւարտուն (*a*)
- 3 *bclrv* դիւթաւալ *փյս* դիւթաւալ (*a*)
- 4 *bclrv* ցան եւ ցիր կացուցանէր *փյս* ցիր եւ ... կացուցանէին (*a*)
- 5 *bclrv* *չիք* որպէս յառիւծու ժանեաց (*a*)
- 6 *a* կորզէին, *bclrv* կորզէր *փյս* կորզէին (*վեր.*)
- 7 *bclrv* ամին *փյս* ամի (*a*, ըստ -12 տող՝ ի լնուլ ՄՀ թուոյ)
- 8 *a* Սեւադայ *փյս* Սեւադայ (*bclrv*)
- 9 *l* աշխարհաւերն
- 10 *O* ի լնուլ 176 թուականին Հայոց ելանէ անիծեալ (*O*, անիծեալն) և աշխարհաւերն Մրվան բազում զօրօք Տաճկաց ի Հայս և իբրև հուր սաստիկ այրէ և հրդեհէ (*O*, այրեաց և հրդեհեաց) զգեղեցկութիւն աշխարհիս, որոյ անուն (*O* անունն) իսկ Աւարանշան ճանաչիր *փյս* եւ ի նոյն ամի ... Հայոց (*abclrv*, 3 տող. այստեղից 5 պարբերութիւն հմմ-ել ենք Օրբէլեանի ԼԲ գլխի բնագրի հետ ամբողջապէս. 176 թուական-ը եւ Մրվան անունը, միգուցէ, յարում են մի քանի պարբերութիւն ստաց, նախ. 69-ի Մրուան-ին յիշող դրուագին, բայց խմբագրման բովում՝ լրիւ իմաստազրկուած)
- 11 *b* դառնա / *O* բազում արարան եկեալ *փյս* յարարի առեալ ... դառնայ (*abclrv*, 1 տող)
- 12 *O* *չիք* եւ (*abclrv*)
- 13 *ab* ամրանա *փյս* ամրանայ (*clrv*)
- 14 *bclrv* բերդատեղն *փյս* բերդատեղի (*a*)
- 15 *O* բերդագիւղն *փյս* բերդատեղի աւանին (*abclrv*)
- 16 *O* Շաղատայ *փյս* Շաղատու (*abclrv**O*,*i*)
- 17 *O* և կամէր ապականել զայն ևս (*O*, զայն ևս ապականել) զգեղեցիկ աշխարհն Սիւսական. և կուտեալ զօրսն (*O* կուտել զօրս) *փյս* որ է (*abclrv*)
- 18 *O* գաւառն *փյս* գաւառին (*abclrv**O*,*i*)
- 19 *O* ի նմին տեղւոյ: Ապա *փյս* եւ տէր (*abclrv*)
- 20 *l* էհար

տականս: 72 եւ Սիւնեաց տէրն<sup>21</sup> ի նմին ամի  
վախճանեցաւ<sup>22</sup>, եւ նոյն ժամայն առ<sup>23</sup> Բաբան<sup>24</sup>  
զգոլուտր<sup>25</sup> Վասակայ<sup>26</sup> Սիւնեաց տեառն ի կնու-  
թեան<sup>27</sup>: 73 եւ առնէր ընդ ձեռամբ իւրով<sup>28</sup> զգա-  
ւառն<sup>29</sup>:

74 եւ<sup>30</sup> ի նոյն ամի<sup>31</sup> տէր Ներսէհ<sup>32</sup> ի Փիլի-  
պեան<sup>33</sup> սպան<sup>34</sup> զՎարազ Տրդատ ի Ստեփաննո-  
սեան<sup>35</sup>, եւ զորդի նորին<sup>36</sup> ի գոգ մաւրն<sup>37</sup> զե-  
նին<sup>38</sup> եւ զամենայն ստացուածս<sup>39</sup> նորա յափշ-  
տակեցին<sup>40</sup>: 75 Այս Վարազ Տրդատ ի Միրհա-  
կան<sup>41</sup> տոհմէն<sup>42</sup> էր, որք զԱղուանս ժառանգեցին

- 21 *O* և իշխանաց իշխեցող, զնայ փութանակի և ածէ զԲաբան պարսիկ բազում զօրօք (*O*, զօրու) լՍտրպատականէ, և էհար զՄրվան սաստիկապէս և փախստական արար. բայց ինքն Վասակ *փյս* ածեալ զԲաբան ... տէրն (*abclrv*, 2 տող)
- 22 *a* վախճանեցաւ, *O* վախճանի *փյս* վախճանեցաւ (*bclrv*)
- 23 *l* էհար, *O* առնու *փյս* առ (*abcv*)
- 24 *crv* Բաբայն *փյս* Բաբան (*abl**O*)
- 25 *bclrv**O*, զդուտրն *փյս* զդուտր (*a**O*)
- 26 *bcrv* Վասակա *փյս* Վասակայ (*al*)
- 27 *crv* կնութիւն *փյս* կնութեան (*abl*) / *O* նորա ի կնութիւն իւր *փյս* Վասակայ Սիւնեաց ... կնութեան (*abclrv*, 1 տող)
- 28 *O*, *չիք* իւրով (*O*)
- 29 *abclrv* *չիք* եւ առնէր ... զգաւառն (*O*, 1 տող. տե՛ս եւ ... եւ)
- 30 *O* *չիք* եւ (*abclrv*, հմմ. նախորդ ծնթ.)
- 31 *O* տուն ամի և *փյս* նոյն ամի (*abclrv*)
- 32 *bclrv**O* Ներսէհ *փյս* Ներսէհ (*a**O*,*i*)
- 33 *a* Փղիպեան, *l* Փիլիպպեան *փյս* Փիլիպպեան (*bcrv*)
- 34 *l* էսպան *փյս* սպան / *O* Սիւնի՝ որդի Փիլիպպէի, սպանանէ վասն ոխութեան ինչ *փյս* ի Փիլիպպեան սպան (*abclrv*)
- 35 *bcrv* Ստեփանոսեան *փյս* Ստեփաննոսեան (*al*) / *O* որդի Ստեփաննոսի՝ Աղուանից (*O*, Աղվանից) իշխանի *փյս* ի Ստեփաննոսեան (*abclrv*)
- 36 *bl* նորա *փյս* նորին (*acrv*) / *O* զորդին ևս *փյս* զորդի նորին (*abclrv*)
- 37 *a* մաւրն գոգ, *bclrv**O* գոգ մօրն *փյս* գոգ մաւրն (*վեր.*)
- 38 *O* ստակէ *փյս* զեցին (*abclrv*)
- 39 *O* ինչս *փյս* ստացուածս (*abclrv*)
- 40 *O* յաւարի առնու *փյս* յափշտակեցին (*abclrv*)
- 41 *b* Միրհան, *O* Միրհական *փյս* Միրհական (*acrv**O*,*i*)
- 42 *a* տոհմէ *փյս* տոհմէն (*bclrv**O*)

որդի ի հարէ<sup>1</sup> առնլով<sup>2</sup>: 76 Սա ութերորդ էր ի  
Վարազ Գրիգորէ<sup>3</sup> առաջին իշխանէն<sup>4</sup> Աղուանից<sup>5</sup>:

77 Յետ այսորիկ անհրամանակատար եղեւ  
գաւառն Բաղաց յանօրէն Բաբանայ: 78 եւ ել նա  
ի Պարսից եւ առ<sup>6</sup>, աւերեաց զերկիրն եւ ի սուր  
սուսերի արկ<sup>7</sup> զկանայս<sup>8</sup> եւ զմանկունս Բաղաց<sup>9</sup>:

79 եւ անտի ի միւս տարին անց<sup>10</sup> Բաբան ի  
գաւառն Գեղաքունի<sup>11</sup> եւ արկ<sup>12</sup> ի սուր<sup>13</sup> զբնա-  
կիւնն՝ ոգիս<sup>14</sup> իբրեւ<sup>15</sup> ժե հազարս<sup>16</sup>: 80 եւ զմեծ  
մայրաքաղաքն<sup>17</sup> Մաքենոցաց<sup>18</sup> վանսն<sup>19</sup> այ-

- 1 *bclrv* հօրէ *փյս* հարէ (*a*)
- 2 *a* առնլով, *crv* առնելով *փյս* առնլով (*bl*) / *O* ունէր զսեպհական տէրութիւնն Աղուանից (*O*, Աղվանից) *փյս* զԱղուանս ժառանգեցին ... առնլով (*abclrv*, 1 տող)
- 3 *crv* Գրիգորոյ *փյս* Գրիգորէ (*al*) / *b* Վարազոյի *փյս* Վարազ Գրիգորէ (*acrv*)
- 4 *a* իշխանին, *bcrv* իշխանէն *փյս* իշխանէն (*l*)
- 5 *O* *չիք* Սա ութերորդ էր ... Աղուանից (*abclrv*, 2 տող) (այս նախադասութիւնը եւս, գուցէ, կարելի է համարել Դասխարացոյ լրացումն իր աղբիւրի բնագրին. հմմ. «Միրհանեաններ» ցուցակը Գ. իք գլխում)
- 6 *l* էհար *փյս* առ (*abcv*)
- 7 *l* էարկ *փյս* արկ (*abcrv*)
- 8 *bclrv* զկանայսն *փյս* զկանայս (*a*)
- 9 *O* այսր անհնազանդ եղև գաւառն Բաղասակա- նայ հրամանի և օրինաց Բաբանայ, որոյ եկեալ ձեռնադրութեամբ Աբլ Ասադայ Աղուանեցոյ (*O*, Աղվանեցոյ)՝ կտորեաց սաստիկ և անողորմ զգաւառն Բաղասականայ, և մաշեաց մինչ ի կա- նայս և մատաղ մանկտիս (*O*, մանկտիս, որք վասն անմեղ խողխողմանցն պսակելոց են ի Քրիստոսէ) *փյս* այսորիկ անհրամանակատար ... Բաղաց (*abclrv*, 4 տող. Աբլ Ասադ-ը եւ Բաղա- սական անուանաձեւն, անշուշտ, յարում են 4 պարբերութիւն յետոյ, նախ. 131-ի Ստեփաննոս Աբլ Ասադ-ի եւ Բայլական-Բաղականեցիք-ի դրուագին, բայց խմբագրման բովում՝ լրիւ իմաս- տախեղուած)
- 10 *bclrv* էանց *փյս* անց (*a*) / *O* իսկ ի գալ ամին զնայ *փյս* եւ անտի ... անց (*abclrv*)
- 11 *bclrv* Գեղարքունի, *O* Գեղարքունոյ, *O*, Գեղա- քունոյ *փյս* Գեղարքունի (*a*)
- 12 *l**O* էարկ *փյս* արկ (*abcrv*)
- 13 *O* սուր սուսերի (*abclrv*)
- 14 *crv* յոգիս, *O* ոգիք *փյս* ոգիս (*bl*)
